

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ-ԲԵՄԱԿԱՆՔ

Շր. 12 Նոյ. 2005.- Սրբոյն Յովհաննու Ոսկերերան Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 13 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Ուր. 18 Նոյ.- Նախատօնակը պաշտուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Շր. 19 Նոյ.- Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Առաւօտեան ժամերգութիւնը եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Վրդ. Զաֆրեան:

Կիր. 20 Նոյ.- Դարձեալ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Ըստ սովորութեան կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աթոռյ բարեբարոյի Աղանի ձէվահիրեանի եւ պարագայից հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 26 Նոյ.- Առաքելոցն Անգրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համարձում Վրդ. Քէշիշեան:

Կիրակի 27 Նոյ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Բագրատ Վրդ. Պուրեւեան:

Շր. 3 Դեկտ.- Տօն Ամենայն Արքայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

- Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Կիր. 4 Դեկտ.- Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Սեւան եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժեով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց եւ քարոզեց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն: Կիւլլապի Կիւլպէնկեանի եւ իր գերդաստանի հոգիներուն ի հանգիստ: Հանդիսապետեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Շր. 10 Դեկտ.- Գրգորի Սփանջեագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան:

Կիր. 11 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Ուր. 16 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս եպս. Շիրվանեան:

Շր. 17 Դեկտ.- Առաքելոցն Թադէոսի եւ Բարթողիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 18 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Վրդ. Զաֆրեան:

Դշ. 21 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 22 Դեկտ.- Յօուսէին Ա. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Սեւան եպս. Ղարիպեանի գլխաւորութեամբ Միաբան Հայրեր ինքնաշարժեով իջան Գեքսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ մատոյց Տ. Սեւան եպս. Ղարիպեան:

Շր. 24 Դեկտ.- Արքայն Նիկողայոսի Միւռայ Սփանջեագործ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Մակար մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Կիր. 25 Դեկտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ծախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարը եւ քարոզչին էր Տ. Կոմիտաս Վրդ. Շերպէքեան:

Ուր. 30 Դեկտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:



Շր. 31 Դեկտ.- Ա. Յակոբյայ Մծբնայ  
Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի  
 Ս. Դիսաղիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ.  
 Մանկասարեան:

Կիր. 1 Յուն. 2006.- Ս. Պատարագը  
 մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր  
 վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս  
 եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Բագրատ  
 Վրդ. Պուրնէժեան:

Դշ. 4 Յուն.- Պատրիարք Սրբազանը  
 նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած  
 Աւագ Տօներու առաջին հանդիսաւոր  
 նախատօնակին, որմէ ետք Միաբանութիւնը Ս.  
 Աթոռոյ «Օրհնեցէ՛ք զՏէր» շարականի  
 երգեցողութեամբ բափօրով բարձրացաւ  
 Պատրիարքարան:

Եշ. 5 Յուն.- Ա. Դաւթի Մարգարէին եւ  
 Յակովբայ Տեառնեղոր (Տօն Առաքելական Ա.  
 Աթոռոյս երուսաղէմի): Ըստ սովորութեան,  
 առաւօտեան ժամերգութեան ընթացքին,  
 Պատրիարք Սրբազան Հայրը, շուրջաւ եւ եմփոքոն  
 զգեցած բարձրացաւ Տեառնեղոր Աթոռի  
 պատուանդանին ուր մնաց մինչեւ ժամերգութեան  
 աւարտը, եւ ընդունեց Միաբանութեան եւ  
 դպիրներուն շնորհաւորութիւնները:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը  
 Աւագ Սեղանին վրայ մատոյց եւ փարօցեց Տ.  
 Արիս եպս. Շիրվանեան:

- Պատարագին աւարտին Պատրիարք  
 Սրբազան Հայրը նախագահեց Ս. Աթոռոյս  
 հանգուցեալ Պատրիարքաց հոգիներուն համար  
 կատարուած հոգեհանգստեան պաշտամունքին:

Ուր. 6 Յուն.- Կէսօրէ ետք Պատրիարք  
 Սրբազան Հայրը նախագահեց Մայր Տաճարին  
 մէջ պաշտուած Ս. Ստեփանոսի նախատօնակին:  
 Բուրվառակիր հայրերն էին Տ. Թէոդորոս Վրդ.  
 Զաւարեան եւ Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Շր. 7 Յուն.- Արքայն Ստեփանոսի  
նախասարկաւագին եւ առաջին Մարտիրոսին:  
 Առաւօտեան ժամերգութեան աւարտին Ս.  
 Աթոռոյս բարեշնորհ սարկաւագները եւ  
 ուրարակիրները, թիւով 10, առաջնորդութեամբ  
 երկու բուրվառակիր վարդապետներուն,  
 մարգարտագարդ սաղաւարտներով, տապանակ  
 ու բուրվառ ի ձեռին, կատարեցին «Սարկաւագաց  
 Հանդէսը»: Արարողութեան նախագահեց  
 Պատրիարք Սրբազան Հայրը: Ս. Պատարագը  
 մատուցուեցաւ Աւանդատան մէջ գտնուող Ս.  
 Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Տ.  
 Կորիւն Արդ. Բաղդասարեան:

- Դիշերասկիզբին ժառանգաւորաց

նաշարահին մէջ տեղի ունեցաւ Միաբանական  
 ընթրիք՝ Սարկաւագաց Տօնին առթիւ:

Խօսք առին դպրոցին Փոխ Տեսուչը Տ.  
 Հայկազուն Արդ. Եղիայեանը, սարկաւագապետ-  
 ներէն Տ. Թէոդորոս Վրդ. Զաւարեանը,  
 ուսուցիչներէն Պրն. Եղիա Տիգրանեան:

Պատրիարք Սրբազան Հայրը ըրաւ իր  
 փակման խօսքը եւ հանդէսը վերջացաւ  
 «Պահպանիչ»ով:

Կիր. 8 Յուն.- Ս. Պատարագը  
 մատուցուեցաւ Մայր Տաճարի աջակողմեան  
 դասին մէջ գտնուող Ս. Կարապետ խորանին  
 վրայ: Ժամարարը եւ փարօցիչն էր Տ. Էմմանուէլ  
 Վրդ. Աբաջանեան: Դիսաւոր Առաքելոց  
 նախատօնակին հանդիսապետեց Տ. Արիս եպս.  
 Շիրվանեան:

Բշ. 9 Յուն.- Ա. Առաքելոցն Պետրոսի եւ  
Պօղոսի: Մայր Տաճարի Ս. Պետրոսի  
 վերնամատրան մէջ Ս. Պատարագը մատոյց Տ.  
 Իսահակ Արդ. Մինասեան:

- Կէսօրէ ետք Պատրիարք Սրբազան  
 Հայրը «Հրաշափառ»ով մուտք գործեց Մայր  
 Տաճար, ուր Որդւոց Որոտման տօնի հանդիսաւոր  
 նախատօնակին նախագահելէ ետք, Ս. Աթոռոյ  
 «Որ է՛նն յէութեան» շարականի երգեցողութեամբ  
 Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

Դշ. 10 Յուն.- Տօն Արքայն Որդւոցն  
Որոտման: Մայր Տաճարի Ս. Դիսաղիրի մատրան  
 մէջ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց  
 եւ փարօցեց Պատրիարք Սրբազան Հայրը:  
 Առընթերակայ վարդապետներն էին Տ.  
 Համբարձում Վրդ. Քէշիշեան եւ Տ. Բագրատ  
 Վրդ. Պուրնէժեան, բուրվառակիր վարդապետներն  
 էին Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան եւ Կորիւն  
 Արդ. Բաղդասարեան: Պատրիարք Սրբազան  
 Հայրը, ամպիոպանի տակ խաչափայտի մասունք  
 ի ձեռին, նախագահեց եռադարձ մեծահանդէս  
 բափօրին: Ապա Միաբանութիւնը եւ ժողովուրդը  
 բափօրով Ս. Աթոռոյ «Որ է՛նն յէութեան»  
 շարականի երգեցողութեամբ բարձրացան  
 Պատրիարքարան: Պատրիարք Սրբազան Հայրը  
 օրհնուած նշխար բաժնելով բոլորին, փակեց  
 Աւագ տօններուն շարքը:

Ուր. 13 Յուն.- Իրիկնադէմին, Պատրիարք  
 Սրբազան Հայրը եւ Միաբանութիւնը ներկայ  
 եղան ժառանգաւորաց վարժարանի սրահին մէջ  
 տեղի ունեցած «Կադանդի» հանդէսին:

Շր. 14 Յուն.- Կադանդ: Նոր Տարի քսա  
 Հին Տամարի: Մայր Տաճարի Աւագ Սեղանին  
 վրայ պատարագեց եւ փարօցեց «Ժամօրհնող»  
 Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:



Կիր. 15 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Տիրայր Արք. Մարտիկեան: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արք. Յովհաննիսեան:

Դշ. 18 Յուն.- Զրագալոյց Ս. Ծննդեան: Առաւօտեան ժամը 9.30ին ընդհանուր ոստիկանապետը, երուսաղէմի ոստիկաններ Պատրիարք Սրբազանին այցելեցին Ս. Ծննդը շնորհաւորելու համար եւ դէպի Բեթղեհէմ թափօրին հսկողութեան համար: Ժամը 10ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերու շարանով ճամբայ ելաւ դէպի Բեթղեհէմ:

Ճամբու կիսուն Յունաց Ս. Եղիափանին առջեւ դիմաւորելու եկած էին Պէյք-Սահուրի, եւ Պէյք-Ճալայի ֆաղաֆապետները, Բեթղեհէմի փոխ ֆաղաֆապետ եւ պետական ներկայացուցիչները:

Իսրայէլեան հինգ ոստիկան ձիաւորներ ընկերացան Պատրիարք Սրբազանի ինքնաշարժին, առջեւէն եւ ֆովերէն, մինչեւ Թաֆէի գերեզմանը, որմէ ետք թափօրը Պաղեստինեան հինգ ձիաւորներով առաջնորդուեցաւ դէպի Բեթղեհէմ: Քաղաքի մուտքին, ինքնաշարժներէն դուրս ելլելով Պատրիարք Սրբազանը եւ Միաբանութիւնը յառաջացան դէպի հրապարակ:

Բեթղեհէմի հրապարակին վրայ դիմաւորուելով, Բեթղեհէմի կառավարիչէն, ընդհանուր ոստիկանապետէն, ֆաղաֆապետէն, Հ.Ե.Մ.իութեան եւ Հ. Մ.Ը.Մ.իութեան եւ այլ սկաւտական խումբերէն, «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ թափօրը քարձրացաւ Ս. Ծննդեան Տաճարի Հայոց Վանք: Յետ Միջօրէի ժամը 2ին Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ «Հրաշափառ»ով մուտք կատարուեցաւ Ս. Ծննդեան Տաճար եւ Ս. Այր: Զրագալոյց Ս. Պատարագը Ս. Այրին մէջ մատուց Տ. Մարկոս Վրդ. Յովհաննիսեան: Ապա՝ Միաբանութիւնը քարձրացան Հայոց Վանք, բակին մէջ կարդացուեցաւ Ս. Ծննդեան Աւետարան եւ երգուեցաւ «Փառք ի բարձունս»:

Եշ. 19 Յուն.- Տօն Ծննդեան եւ Աստուածայայտութեան: Կէս-գիշերէն առաջ ժամը 10ին գիշերային պաշտամունքէն յետոյ, Միաբանութիւնը կ'իջնէ Ս. Ծննդեան այր ուր կը շարունակուի «Փառք ի բարձունս»ի երգեցողութիւնը: Պաղեստինեան կառավարութեան նախագահ Մահմուտ Աքրաս եւ ներկայացուցիչներ, ներկայ եղան: Աւարտին, Պատրիարք Սրբազան Հօր Ծննդեան հայերէն եւ Անգլերէն պատգամներէն յետոյ մեկնեցան, շնորհաւորելով Պատրիարք Սրբազան Հայրը:

Պաշտամունքները շարունակուեցան Տաճարի մէջ: Պատրիարք Սրբազանը եւ Լուսարարապետ Սրբազանը վերադարձան երուսաղէմ:

Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Մկրտիչ Արք. Պողոսեան:

Ջրօրհնէֆի արարողութեան հանդիսապետեց Տ. Մովսէս Եպս. Մովսիսեան:

Ս. Ծննդեան Այրի մէջ պատարագեց Տ. Մովսէս Եպս. Մովսիսեան: Պաշտամունքներու աւարտին ժամը 6.30ին Միաբանութիւնը թափօրով եւ երգեցողութեամբ կը քարձրանայ Հայոց Վանք: Բակին մէջ կը կարդացուի Ս. Ծննդեան Աւետարանը եւ կ'երգուի «Փառք ի բարձունս»: Միաբանութիւնը կը վերադառնայ երուսաղէմ:

Երուսաղէմի մէջ Զրագալոյցի արարողութիւն կը կատարուի Ս. Յարութեան Տաճարին մէջ: Ս. Գերեզմանին վրայ կը պատարագէ Տ. Նորայր Արք. Գագագեան: Նախատօնակին հանդիսապետն էր Տաճարին Տեսուչը՝ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Արարողութիւնները կ'աւարտին Տաճարին Տեսչարանին մէջ:

Առաւօտուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Սեղանին վրայ պատարագեց Տ. Նորայր Արք. Գագագեան: «Ջրօրհնէֆ»ի արարողութեան հանդիսապետեց Տ. Ներսէս Արք. Պօգապալեան:

Ուր. 20 Յուն.- Յիշատակ Մեռելոյց: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգման Տ. Գուսան Վրդ. Այնաճեան, Հոգեհանգստեան կարգին հանդիսապետեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Շբ. 21 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղի: Ժամարարն էր Տ. Կորին Արք. Բաղդասարեան:

Կիր. 22 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Ներսէս Արք. Պօգապալեան: Ժամարարը եւ ֆարոգիչն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէքեան:

Ուր. 25 Յուն.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 26 Յուն.- Տօն Անուանակոչութեան Տեառն: Առաւօտուն, Տ. Տիրայր Արք. Մարտիկեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Օրուն հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուց եւ ֆարոգեց Տ. Տիրայր Արք. Մարտիկեան:

- Դէպի վանք դարձին հայոց թաղի մուտքէն Միաբանութիւնը «Լոյս ի լուսոյ» շարականը երգելով քարձրացաւ Պատրիարքարանի դահլիճը: Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց



«Տնօրհնէ՛լ»ի արարողութեան, որ կրկնուեցաւ վարդապետաց սեղանատան մէջ:

Ուր. 27 Յուն.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Շր. 28 Յուն.- Տօն Մենքեան Ս. Յովհաննու Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 29 Յուն.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Շր. 4 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան:

Կիր. 5 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան:

Շր. 11 Փետր.- Արքայն Գրիգորի Աստուածաբանին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 12 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աբաջանեան:

Շր. 18 Փետր.- Ս. Սարգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Սարգսի մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, հանգուցեալ ազգային քարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի եւ ծնողաց՝ Սարգսի եւ Տիրուհւոյ եւ գերդաստանի ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ. հանդիսապետեց Լուսարարապետ Սրբազանը:

Կիր. 19 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Շր. 25 Փետր.- Արքայն Իսահակայ Պաթբեի Հայրապետին մեքայ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 26 Փետր.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս

Վրդ. Շերպէթեան:

- Տեառներնդ առաջի մեծահանդէս նախատօնակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, կատարուեցաւ «Անդաստան» եւ «մումալա-ռութիւն»: Նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

- Գիշերասկիզբին Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Եկեցէ՛ք»ի հսկման կարգը: Հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Բշ. 27 Փետր.- Տեառներնդ առաջ: Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Դշ. 1 Մարտ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 2 Մարտ.- Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 վկայիցն: Յիշատակ Մեռելոց եւ Տօն Ազգային: Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց ժառանգաւորաց վարժարանի փոխ տեսուչ Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին:

Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Հոգեհանգստեան կարգ, մեր ազգի հին եւ նոր ննջեցեալներուն հոգիին ի հանգիստ: Նախագահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Ուր. 3 Մարտ.- Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորւոց Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան, որ նաեւ քարոզեց: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան: Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ասորւոց Տեսուչին կողմէն:

Շր. 4 Մարտ.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն Հարիւր Յիսուսն Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ խորանը, սեղանները եւ գլխաւոր սրբանկարները, Համբարձի շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհի եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռնով:

Կիր. 5 Մարտ.- Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուցեց Տ. Բարսեղ Վրդ. Դպրատէրեան: Դպրապետի պաշտօնը վարեց Տ. Գուսան Վրդ. Ալեանեան: «Հայր Մեր»էն առաջ քարոզեց Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Դշ. 8 Մարտ.- Սկիզբն Կարգաց Մեծի



Պահոց: Առաւօտեան Մայր Տանարի մէջ տեղի ունեցաւ «Արեւագալ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք «Խաղաղականի» առաջին ժամերգութիւնը:

ԵՂ. 9 Մարտ.- Մեծ Պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ նախագահեց եւ ֆարոգեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 10 Մարտ.- Նախատօնակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 11 Մարտ.- Արքայն Թէոդորոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տանար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատօնակը ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց պայծառութիւն: Թափօրապետն էր Տ. Աւետիս Վրդ. Իփրանեան:

Կիր. 12 Մարտ.- Քառասնորդաց: Արտաւանան: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր երկրորդ մուտքէն ետք մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

«Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ս. Պատարագէն ետք, կատարուեցաւ մեծահանդէս եռադարձ Թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

ԳՂ. 14 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէրեան:

ԵՂ. 16 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Լուսարարապետ Սրբազանը:

Շր. 18 Մարտ.- Ա. Կիւրդի երուսաղիմացւոյն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տանարի աւանդատան, Ս. Կիւրդի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Կիր. 19 Մարտ.- Քառասնորդաց: Անառակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Կորիւն Արդ. Բաղդասարեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

ԳՂ. 21 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

ԵՂ. 23 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:



## ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Գշ. 22 Նոյ. 2005 - Երուսաղեմի Յոյն Պատրիարքական նորոգման Թեոֆիլոս Պատրիարքի գահակալության արարողության, Ս. Յարութեան Տաճարի մէջ, ներկայ գտնուեցան Արիս Եպս. Ծիրվանեան եւ Ս. Յարութեան Տաճարի Տեսուչ Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Իսկ յետ միջօրէին, Երուսաղեմի Նոթրը Տամ Կեդրոնին մէջ կազմակերպուած շնորհաւորանքի ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Գոսսան Վրդ. Ալեանեանի, եւ Իսահակ Արդ. Միմասեանի:

Եշ. 27 Դեկտ.- Կաթոլիկ եւ Բողոքական Եկեղեցիներու Ս. Մննդեան տօնին առիթով, Ս. Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, նախ շնորհաւորութեան գնաց Ֆրանչիսկեան Կիւսթոտին, այնուհետեւ՝ Լատինաց Ամեն. Պատրիարքին, ուր հաւաքուած էին միւս յարանաւանութեանց եկեղեցական ներկայացուցիչներ եւ: Ամմիշապէս ետք, Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի շնորհաւորութեան գնաց Պապական Նուիրակին:

Գշ. 29 Դեկտ. - Իսրայէլի նախագահ Մօշէ Բաքաթի կողմէ, ի պատիւ Քրիստոնեայ Համայնքներու կրօնապետներուն, նախագահական ապարանքին մէջ կազմակերպուած Նոր Տարուան եւ Հրէական Խանութային առթիւ հիւրասիրութեան մասնակցեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Սեւան Եպս. Դարիպեանի եւ Գոսսան Վրդ. Ալեանեանի:

Բշ. 9 Յունիս. 2006 - Յոյն Ողորդապետ Եկեղեցւոյ Ս. Մննդեան տօնի առթիւ, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը գլխաւորութեամբ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորութեան գնաց Յունաց Պատրիարքին: Նախնական պայմանաւորութեան համաձայն, յաջորդաբար Յունաց Պատրիարքարան ժամանեցին միւս յարանաւանութեանց եկեղեցւոյ պետերն իրենց հետեւորդներով:

Կիր. 15 Յունիս.- Նոր Տարուան եւ Ս. Մննդեանի առիթով Երուսաղեմի հոգեւոր պետերը միասնաբար, կէսօրէ ետք իմֆնաշարժերու թափօրով մեկնեցան դէպի Ռամալլա քաղաք: Պատրիարք Սրբազան Հօր կ'ընկերակցէին Արիս Եպս. Ծիրվանեան, Սեւան Եպս. Դարիպեան եւ Իսահակ Արդ. Միմասեան: Պաղեստինի Կառավարութիւնը՝ ներկայութեամբ նախագահ Մահմուտ Ապպահին, Վարչապետին եւ Խորհրդարանի նախագահին,

հիւրասիրութեամբ պատուեց հիւրերը: Եղան շնորհաւորական եւ բարեմաղբաւքի խօսքեր:

Բշ. 16 Յունիս.- Բեթղեհեմի շրջանի Իսրայէլեան զինուորական Իշխանութեան ներկայացուցիչներ Հայկական Մննդեանի նախապատրաստութեան եւ շնորհաւորանքի առիթով Պատրիարք Սրբազան Հօր այցելութեան եկան:

Եշ. 19 Յունիս.- Երեկոյեան, Պապական Նուիրակ եւ Վատիկանի Ընդհանուր Դեսպան Մօնս. Փիէթրօ Սամպիի երկար տարիներու ծառայութենէն ետք, «Բարի Երբ»-ի առթիւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն Երուսաղեմի Նոթրը Տամ Կեդրոնին մէջ: Ընդառաջելով Պապական Նուիրակին հրաւերին, Պատրիարք Սրբազան Հայրը ներկայ գտնուեցաւ, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Գոսսան Վրդ. Ալեանեանի եւ Իսահակ Արդ. Միմասեանի:

Ուրբ. 21 Յունիս.- Հայոց Ս. Մննդեան տօնի առիթով Պատրիարքարան շնորհաւորանքի եկան Յունաց Ամեն. Թեոֆիլոս Պատրիարքը եւ Լատինաց Ամեն. Միշէլ Սապպահ Պատրիարքը ընկերակցութեամբ իրենց անդամներու, ինչպէս նաեւ Կաթոլիկ եւ Բողոքական, Հայէշ, Դպտի եւ Ասորի Ողորդապետ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ: Աւելի ուշ, Ֆրանչիսկեան Միաբանութիւնը ժամանեց գլխաւորութեամբ Գոստոսին: Իսկ Պապական Նուիրակ Մօնսր. Փիէթրօ շնորհաւորանքի այցելութեան եկաւ իր անդամներով:

Կէսօրէ ետք, Քաղաքապետարանի եւ Կրօնից Նախարարութեան ներկայացուցիչներ շնորհաւորանքի համար Պատրիարք Սրբազան Հօր այցելութեան եկան:

Բշ. 23 Յունիս.- Ընդառաջելով Երուսաղեմի քաղաքապետ Ուրի Լուփոյեանսիի հրաւերին, 2006 Նոր Տարուան առթիւ, Քաղաքապետարանին մէջ կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Արիս Եպս. Ծիրվանեանի, Գոսսան Վրդ. Ալեանեանի, Բագրատ Վրդ. Պուրմէճեանի եւ Իսահակ Արդ. Միմասեանի: Արարողութեան ներկայ էին Ս. Քաղաքի հոգեւոր պետեր, համայնքապետներ, հիւպատոսներ եւ այլ պետական անձեր:

Եշ. 2 Փետր.- Հայաստանի Փուտրոյի բարձրագոյն առաջնութեան ակումբներէն «ՄԻԿԱ» տղամարդկանց խումբը Իսրայէլ կը գտուէր մրցումներու մպատակով: Հիմզաբքի, խումբն իր ամբողջ կազմով այցելութեամբ եկաւ Պատ-



բիարբարան, ղեկավարութեամբ տնօրէն Տիար Կարլոս Ղազարեանի: Պատրիարք Սրբազան Հայրը բարձր գնահատեց խումբին աջակցող անձանց կատարած ջանքերը՝ հայ մարզիկները տեսնելու Սուրբ Երկրին մէջ, միաժամանակ խրախուսելով, որ վերջիններս բարձր պահեն հայրենիքին պատիւն ու յարգանքը եւ ցուցաբերեն յուսալի արդիւնքներ մարզական կեանքին մէջ:

Շր. 18 Փետր.- «Շուէտական Քրիստոնեայ Կեդրոնի» նախկին տնօրէն Քէնթ Մալքուիսթի «Քարի Երթ»-ի, եւ միաժամանակ նորանշանակ տնօրէն Մարիա Ուոլթընի «Քարի գալուստին»

առթիւ, Հին Քաղաքին նոյնանուն կեդրոնին մէջ տրուած հիւրասիրութեան ներկայ եղաւ Էֆիմենիք Յարաքերութեանց Վարիչ Արիս Եպս. Շիրվանեան:

Բշ. 20 Փետր.- Ընդառաջելով Իսրայէլի նախագահ Մօշէ Քացաւի հրաւերին, ի պատիւ Մերձքալթեան երկրներէն Լատվիայի Նախագահ Vaira Vike-Freibergaին, նախագահական ապա-րանքին մէջ կազմակերպուած քարեգալստեան արարողութեան ներկայ եղաւ Էֆիմենիք Յարա-քերութեանց Վարիչ Արիս Եպս. Շիրվանեան:

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԵՆ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԽԱՉՔԱՐԵՐՈՒ ՄԱՍԻՆ

ԻԻՆԵՍԳՈ-ի Կեդրոնի Ընդհանուր Տեսուչ՝ Քօլչինօ Մաքսուրայի ուղղուած նամա-կով, Երուսաղէմի Հայ Պատրիարք, Տ. Թորգոմ Արք. Մանուկեան, խորին մտահոգութիւն և ընդվզում արտայայտած է ընդդէմ վերջերս հրապարակուած լրատուութեանց՝ Նախիջեւանի միջնադարեան հայկական գերեզմանոցի մը մէջ գտնուող, Ազերի զինուորներու ձեռքով, խաչքարերու սրբապղծութեան և ոչնչացման մասին: Այս խաչքարերը, կը նշէ Պատրիարք Սրբազան Հայրը, պատմական և կրօնական նշանակութիւն ունեցող գերեզմանաքարեր են, նաև ինքնայատուկ հնադարեան հայ քրիստոնէական քանդակարուեստի ստեղծագործութիւններ ըլլալով:

Երուսաղէմի Հայ Պատրիարքարանը այս աւերածութիւնն եւ բռնարարութիւնը կը նկատէ որպէս մշակութային ցեղասպանութիւն և դիմած է ԻԻՆԵՍԳՈ-ին՝ միջամտելու և կասեցնելու այս չարական փորձերը բնաջնջելու հայ քրիստոնէական մշակութային ժառանգութիւնը Նախիջեւանի երկրամասէն, որ Ատրպէյճանի գերիշխանութեան տակ է:

Պատրիարք Սրբազան Հօր նամակը կը յորդորէ ԻԻՆԵՍԳՈ-ին Ընդհանուր Տեսուչին այս ոճիրները միջազգային համայնքին ուշադրութեան յանձնելու, որպէսզի այսպիսի ազգային գանձերու անհետացման անխիղճ արարքներ չի գոյատևեն: Նաև արտայայ-տած է այն յոյսը որ ԻԻՆԵՍԳՈ-ն իր միջազգային ազդեցութիւնը բանեցնէ Ատրպէյճանի կառավարութեան վրայ՝ որ վերջինս յարգէ իր յանձն առած պարտաւորութիւնները պահպանելու իր հողատարածքի կրօնական և մշակութային յուշարձանները:





# ՀԱՅԴԻՔԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԶԱՐԻԱՐԿԱՏԻ

## ARMENIAN PATRIARCHATE

Թվական  
Date

3 January 2006

Nº

Koichino Matsuura  
Director-General  
UNESCO  
7, Place de Fontenoy  
75352 Paris  
France

Dear Director General Matsuura:

We address this letter to you to express our deep concern and outrage concerning the reports of the on-going desecration and destruction, by Azeri soldiers, of historically and religiously significant tombstones in a medieval Armenian cemetery in the Autonomous Region of Nakhichevan, under Azerbaijani sovereignty. These *khachkars*, or stone crosses, are unique artistic expressions of millennial Armenian religious sculpture.

The Armenian Patriarchate of Jerusalem considers this vandalism and violence as cultural genocide. We appeal to your organization to intervene and put a stop to these malicious attempts to eradicate the evidence of the Armenian Christian cultural legacy from the region.

We also urge you to bring these criminal acts to the attention of the international community so that such unconscionable acts of ethnic cleansing are not allowed to be perpetuated.

We trust that UNESCO will exert its influence over the government of Azerbaijan to honor its commitment of preserving and safeguarding religious and cultural monuments within its territory.

Prayerfully,

*Archbishop Torkom Manoogian*

Archbishop Torkom Manoogian  
Armenian Patriarch of Jerusalem







# ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թուական  
Date

30 October 2005

## OFFICIAL COMMUNIQUÉ

On the evening of Thursday, 27 October 2005, an altercation between a group of students, the guard and the Dean of the St. James Brotherhood Seminary and Theological School, V. Rev. Fr. Baret Yeretzian, resulted in bodily injuries to two of the seminarians, the Dean, and the guard on duty at the Seminary entrance.

Upon consulting with His Beatitude the Patriarch, with the immediate arrangements by Archbishop Nourhan Manougian, the Grand Sacristan, and the swift response by the emergency medical services unit, the injured were transported to the hospital, where they received treatment and were then released. Order was restored within the Seminary compound under the guidance of His Eminence the Grand Sacristan.

Fr. Haigazoun Yeghiayian, as the Acting Dean, continues to oversee the discipline of the Seminary.

Երուսաղեմի Հայ Պատրիարքութիւն

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբեր 27, Հինգշաբթի գիշեր, Երուսաղեմի Ժառանգատրաց Վարժարանին մէջ անհաճոյ միջադէպ մը տեղի կ'ունենայ Վարժարանի խումբ մը աշակերտներու և Դպրոցի պահակին և Տեսուչ Հոգ. Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեանի միջև, որու ընթացքին ֆիզիքական վերքեր կը ստանան երկու աշակերտներ, Տեսուչ Հայր Սուրբը և Վարժարանի մուտքի պահակը:

Խորհրդակցաբար Պատրիարք Սրբազան Հօր, Լուսարարապետ Գեր. Տ. Նուրհան Արք. Մանուկեանի անմիջական կարգադրութեամբ, և բժշկական շտապ օգնութեան, սպասարկութեամբ, վիրատրները հիւանդանոց փոխադրուեցան, և խնամքի ենթարկուելէ յետոյ, արձակուեցան հիւանդանոցէն: Ժառանգատրաց Վարժարանի կարգապահութիւնը վերահաստատուեցաւ Լուսարարապետ Սրբազան Հօր հրահանգին համաձայն:

Հոգ. Տ. Հայկազուն Արդ. Եղիայեան, իբրև Փոխ Տեսուչ, կը շարունակէ հսկել Վարժարանի ներքին կարգապահութեան:

ԴԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

#####





# ՊԱՏՐԻԱՐԺԱՐԿԱՆ ՆԱՅՈՅ

ARMENIAN PATRIARCHATE

№

Թուական  
Date

13 Նոյեմբեր 2005

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 2

Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Ժառանգատրաց Վարժարանի և Ընծայարանի կարգապահութիւնը վերահաստատուած է 27 Հոկտեմբերի անհաճոյ միջադէպէն ի վեր՝ որու մասին Պատրիարքարանի պաշտօնական հաղորդագրութեամբ յայտնած էինք և որ հրապարակուեցաւ հայ մամուլին մէջ:

Ժառանգատրներու խստապահանջ առօրեայ կեանքը կը շարունակուի իրենց ուսումնական դասերով և կրօնական պարտականութիւններով: Այս է աւանդական իրավիճակը այն երիտասարդներուն՝ որոնք Սրբոց Յակոբեանց Ժառանգատրաց Վարժարանի և Ընծայարանի եօթնամեայ դասընթացքին մասնակցելով՝ կը պատրաստուին ձեռնադրուելու և նուիրուելու իրենց հոգեւորական ասպարէզին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ ծառայութեան մէջ:

Ճեմարանիս Ուսումնական Խորհուրդը նշանակուած և լիազօրուած Պատուարժան Տնօրէն Ժողովի կողմէ՝ խորհրդատու ըլլալ Ժառանգատրաց Վարժարանի Տեսչութեան, կը զբաղի Վարժարանի ուսումնական կենցաղով, դաստիարակչական, կարգապահական և բարոյական հարցերով, խորհրդակցութեամբ Ամենապատիւ Թորգոմ Արք. Մանուկեան Սրբազան Պատրիարք Հօր: Ուսումնական Խորհուրդը կ'օժանդակէ Փոխ Տեսուչ Տ. Հայկազուն Աբեղայ Եղիայեանին՝ հսկելով ներքին կարգապահութեան և կրօնական և ուսումնական պարտականութիւններու կատարման: Ուսուցչական կազմը կը գումարէ իր հերթական ժողովները՝ վերաքննելու Ժառանգատրներու դաստիարակչական յառաջդիմութիւնը և բարոյական վարքը, ըստ Ճեմարանի կրթական պահանջներուն:

ԴԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ





# ՊԱՏՐԻԱՐԺԱՐԸՆ ՆԱՅՈՑ

ARMENIAN PATRIARCHATE

Թուական  
Date

21 November 2005

## OFFICIAL COMMUNIQUÉ #3 re: SEMINARY

In his letter dated 25 October 2005, addressed to His Beatitude the Patriarch, Very Reverend Father Baret Yeretzian had expressed his desire to resign from his six-year tenure as Dean of the St. James Seminary and Theological School. Regretfully, the occurrence on October 27 disrupted the normal course of the resignation and was misinterpreted in the press as, "the Dean was dismissed."

Father Baret sought to maintain discipline and order within the Seminary and Theological School, and in the seminarians' participation in religious services.

The Educational Council and the Vice Dean, Father Haigazoun Yeghiayian, are conducting the affairs of the Seminary and Theological School until the appointment of a new Dean by the Holy Synod.

21 Նոյեմբեր 2005

## ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻՒ 3

Տ. Պարետ Ծ. Վրդ. Երեցեան, իր 25 Հոկտեմբեր 2005 թուակիր նամակով ուղղուած Պատրիարք Սրբազան Հօր՝ ցանկութիւն յայտնած էր հրաժարելու Սրբոց Յակոբեանց Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի վեցամեայ տեսչական պաշտօնէն: Յաւալիօրէն 27 Հոկտեմբերի միջադէպը եկաւ խանգարելու հրաժարականի բնական ընթացքը և մամուլի մէջ տեղի տուաւ թիւր մեկնաբանութեան թէ՛ «Տեսուչը հեռացուած է»:

Հայր Պարետ Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի կարգապահութեան հանդէպ խստապահանջ անձ մըն էր թէ Վարժարանէն մերս և թէ եկեղեցական պաշտամունքներու մասնակցութեան տեսակետէն:

Ուսումնական Խորհուրդը և Փոխ Տեսուչ՝ Տ. Հայկազուն Արդ. Եղիայեանը միասնաբար կը վարեն Ժառանգաւորաց Վարժարանի և Ընծայարանի գործերու ընթացքը մինչև նոր տեսուչի մը նշանակումը Պատուարժան Տնօրէն Ժողովի կողմէ:

ԴԻՒՆ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԸՆԻ

#####